


քրոնուածանը՝ պահ պատրակից ու առաջ տեսանկառակա գոյածի
առ ճախուս պատմա վահութ ճախուսադար և առ աշխատա առ առ աշխատա
առ
առ
առ
առ
առ առ



ԿՐՈՆԱԿԱՆ

Խ Ա Ս Բ Ո Վ Ի Կ Թ Ա Ր Գ Ա Մ Ա Ն Ի Զ

(Հինգերորդ գար)

Մեր գրաւոր գրականութեան սկիզբը սովորաբար համարւումէ չորրորդ
դարը. բայց հետզետէ սկսումէ տիրապետել այն ուղիղ և ողջախոչ հա-
մոզումը. որ այդ սկզբնաւորութիւնը պէտք է գնել ոչ թէ չորրորդ. այլ
հինգերորդ գարում. Գրերի գիւտից առաջ ենթագրել գրաւոր հայ մա-
տենագրութիւն արդէն ինքնըստինքեան անհեթեթ է և չորրորդ գարին
վերագրուած բոլոր ինքնագիր կամ թարգմանական երկերը պէտք է հա-
մարել խմբագրուած հինգերորդում. Բանասիրութիւնը տալիս է արգեն
բարական շատ գրական ապացոյցներ այս բանին. Եյսպիսով հինգերորդ
սկեղէն գարի գրական պաշարը աւելի ևս ընդարձակւումէ և հարստա-
նում. Զընայելով մինչեւ այժմն եղած բոլոր ջանքերին և հրատարակու-

թեանց՝ այսուամենայնիւ դեռ ևս հինգերորդ դարի, այդ համեմատաբար ամենալաւ ուսումնասիրուած գրականական շրջանի, ամբողջ գրական հարըստութիւնը չէ հրատարակուած։ Կան բաւական շատ անյայտ կամ անունով միայն յայտնի գրողներ և գրուածքներ։ Սրանց կարգիցն է Խոսրով կամ Խոսրովիկ թարգմանիչը և իւր երկասիրութիւնները։ Հ. Գ. Զարքանալեանը հետեւեալն է ասում Խոսրովի մասին։ «Ասոնցմէ (երկրորդ թարգմանիչը) զատ կը յիշատակուին անորոշ ժամանակաւ և առանց ո՛ր դասուն վերաբերելուն։

Խոսրով որուն համար կը յիշատակուի թէ գրած ըլլայ զպատմութիւն վարուց սրբոյն Սահակայ հայրապետի, Զեռագրաց ցուցակի մը մէջ ալ կը հանդիպինք (Մատենադարան Էջմիածնի, թիւ 920). «Արտասանութիւն Խոսրովիկայ թարգմանչի ի մենամարտութիւն Դաւթի և Գողիաթու.. և սկզբնաւորութիւնն է «Պատերազմական հանդիսիցն գումարք»։ Երեն կը նծայուի դարձեալ Զ.րօր Հնեաց կանոնին թարգմանութիւնն ի յունէ։ Պատառիկ մը կայ առ մեզ «վասն կարգի կաթուղիկոսաց» խորագրով որ Խոսրովու կը կարծուի»⁴⁾։

Բայց Խոսրովիկի ժամանակը և ո՛ր դասին պատկանելը բոլորովին անորոշ էլ չէ։ Ղազար Փարպեցու խօսքնրից երկումէ, որ Խոսրովիկը երկրորդ դասի թարգմանիչներին այն է Խորենացու՝ ընկերներից էր, ծաղկել էր Եղ-դ դարի երկրորդ կիսում և վախճանուել էր Խորենացուց յետոյ, այն է հինգերորդի վերջերում՝ օտարութեան մէջ։ Ահա Ղազարի խօսքերը. «Անարատ և յամենեցունց յարգելի յոյսն՝ տէր Խոսրովիկ, չեւ ևս հասեալ ի սահմանս մեր, մինչդեռ գայր ի ճանապարհի և լուան, որպէս ի վերայ թշնամուց ընդդէմ զինեցան, ասելով. Ահա, ուր գայ միւս թարգմաննն եւ օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զգոնչիւն մահաձայն աղեղանցն՝ աղօթեաց առ Քարձրեալն, և վաղվաղակի ընկալաւ զինդիրն. որում և տենչալի նշանացն այլք՝ և ոչ մեք՝ արժանի եղեն ընդունակութեան»²⁾։ Ասել է թէ այս սուրբ թարգմանիչն էլ՝ իւր ընկերների նման՝ ենթարկուել էր խաւարամիտների հալածանքներին։

Այս թարգմանչի գրուածքներից այս անգամ՝ հրատարակումնք վերևու յիշուած Արտասանութիւնը, որ գտնեւումէ մինչև այժմս յայտնի եղած ձեռագիրներից միայն մէկում (Մայրցուցակ 940), Կարծումնք, որ իբրև նշխար ոսկեղեն դարի և իրրեւ լեզուի նմուշ, թէև յաւարան, հետա-

4) Հին Պարութիւն, 1886, եր. 278.

2) Թուղթ Ղազարայ Փարպեցու. Մեղադրութիւն ստախօս արեգայից։ Ղազ. Փարպեցի եր. 609. Անեատ. 1873.

քըլքրական կը լինի հին գրականութեամբ և հին լեզուով զբաղուողներին։ Աւելորդ չեմ համարում Խոսրովի մասին իմ ունեցած բոլոր տեղեկութիւններս ամփոփելու համար՝ մի քանի խօսք ասել այդ թարգմանչի և մի ուրիշ գրուածքի մասին, որ բոլորովին անծանօթ է մեր բանասէրներին։ Մեր մատենագարանի մի այլ ձեռագրում (Մայր-ցուցակ, թիւ 655), որ գրուած է Երուսաղէմում 1675 Փրկչական թուին, գտնւումէ այսպիսի խորագրով մի թերատ գրուածք. «Խոսրովիայ թարգմանչի հայոց՝ առ այնուիկ, որ ասեն բնութեամբ անձեւ և անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած Բան ի կուսէն։ Այս նոյն գրուածքը Մայր-ցուցակի մէջ նշանակուած է ուրիշ վերտառութեամբ։ Բանք վասն մարդեղութեան Յիսուսի ի Խոսրովիայ թարգմանչէ Հայոց։ Այս վերտառութիւնը անկասկած ցուցակագրովնն է։ Խոսրովի այս՝ մինչև այժմն անծանօթ մնացած՝ գրութեան սկզբնաւորութիւնն է։ Այս ուրուք երբէք նախ քան զվախճան առնուլ մեղացն տեսանեմք դատել զոք զաստուած, և վկայ աստուածայինն առ ի մէնջ ասիցո գիր։ Տե են, ասէ, լցեալ ամուրհացւոցն մեղք։ Իսկ թերի է մնում այս մեր ունեցած հատուածը հետեւալ նախադասութեամբ։ Այլ վնասեսցին յաւէտ յաղագս նորա, որք անհաւատութեամբ են վնասեալ ախտիւք, խորհուրդք օրինակ իմն միւնոյն...։ Ամրողջ հատուածը 5 թուղթ է (10 երես) երկիջեան։ Մեր գիտցածով՝ այս առաջին գրուածքն է ընդգէմ Քաղկեդոնի ժողովի և Խոսրովի մեր ձեռքն հասած կարասիրութիւններից կարեսրագոյնը։ Լեզուի և բովանդակութեան մասին մի թեթև գաղափար տալու համար գնենք այստեղ մի փոքրիկ կտոր, մօտ երկու էջ (ամբողջը 19'/ էջ), Աւղագրութիւնն ու կէտագրութիւնը թողնում ենք նոյնութեամբ։ Աւ այժմ աւասիկ առ մեզ այնպիսի իմն ժամանեաց փորձութիւն քանզի որ յառաջ գոյզն ինչ ժամանակաւ ծածկել ջանացաք ընդ քաղցրութեամբն աստուծոյ և մարդասիրութեամբ ո՛չ հրապարակելով զստահակութեանն նորա զանմարդութիւնն և ո՛չ միայն զիսոստացեալսն ի վերայ ոչ ածելով նմա իրաւապէս ինչ արարաք առ այն զիսոստացեալսն ի վերայ որ յարձակութիւն մասին։ այլ և յոլովագոյնն զիրոյն մատուցանելով եղանակս առաւել քան թէ արժանաւորաց սիրոյն։ ո՛չ առ այլ ինչ. այլ ասացելոցն ակն ունելով իրրե թէ տէր աստուած կամի զի արդարացի, և բարձրացուցէ զօրհնութիւն։ այլ վախճան իրացն յայտնակառակ մերոցս երեխեր կարծեաց. զի որ ուտէրն ընդ մեզ յաճախեաց առնել ընդ մեզ խարէութիւն։ Զի յորդորէր զմեզ ժողով գումարել զժողովոյն պատճառս զաշխարհս մերոյ մարդիկ զնէր. և զմի և զնոյն երմիաբանութեան և բաժանման կազմէր հնարս. խոստանայր ցածուցանել է ժողովոյ անտի զօտարափառութեան իւրոյ ջերմութիւն և զանշափափիւտն ի բաց թողուլ նորաձեռութիւն կարգաց. կրօնից և պաշտամանց. այլև որ

ծայրագոյն է կրծիմն ընդ մեր և արեւմտականացն. յանձն առնոցը ընդ մեզ միաձայնել մի բնութիւն ըստ գերահրաշ միաւորութեանն աստուածն բանի մարմնացելոյ խոստովանել ասելով. ընդէր ոչ զասացեալսն ի սրբոց հարցն ասացից և եօ. յիշեցուցանելով յանուանէ զաթանաս. զիւրեղ զեփրեմ: զյուլիս հռոմայ և զայլս. առ այսորիւք և պայմանու իւն վճռածեալքս առ միմեանս հաստատեալ յերիւրէր ոչ մեզ զժողովն քաղկեդոնի և զտոմարն Աեռնի յիշել և ոչ իւր. նոյնպէս և զաշխարհիս մերոյ անտի և այսր զեկեղեցեաց վերակացուս որ թէպէտ և անմարթ էր զաւանդութեան հարանցն փոխել զկարդ. և ոչ կատարելապէս ատել զատեցողն զտէր. համայն զպատառման նորա ընդ միտ ածելով մեծագոյն վարկեալ զմիաւորութիւնն: զհետ տայաք զմեզ և յայսմիկ առ ի նմանէ ասացելոցն այլև զանուանեալն իւր մեծ և զօրս ընդ նովաւ ընդ մերոյ ի ձեռին կարգեալ խոստանայր իշխանութեամբ առ այսորիւք և այսպիսեօքս առանձինն հրապուրէր բանիւք. իսկ առ այլս զյաղթասիրելն պարծանայր զիւրե զմեզ ի պարտութիւն արկանել. մինչ զի եթէ ոչ տեառն օդնեալ էր փոքր միւս ևս լինեաք ծիծաղելիս բազմաց. այլև գմնդակագոյն ևս քան զծիծաղելն ասասցէ որ զայնքանեաց ժողովրդոց տեսանելով զշփութութիւն. որբ ոչ նմանապէս իրերաց վախճանի ելիցն ակն ունելով տարակուսանային, զի զոմանս հօմակամութեան կարծիք բարկութեամբ զինէին տեսանելով զմեր առ նա խաղաղասիրելն. իսկ այլք զօրանալ հակառակամարտին և իւրեանցն տկարանալ զլիսոյ երկուցեալք. և այսորիկ մերայոցն. իսկ նորացյքն և որ ի նորուն սուտ ստապանծ բանիցն քաջալերեալք զյաղթութեաննմա սովասէին բերել փառս: Խսկ ապա յորժամաստուածային օգնականութեամբն ի յուսոյն զրկեալ հակառակ այսորիկ եղեն հանդիպեալ առ այլ իմն տեսակ խարէութեան փոխեալ անկանէր իրութէ զհակառակութեան իւրոյ բանս գրով լուծանել միանդամայն որպէս թէ զհայցուածոցն մերոց կատարել փափագումն: Խսկ յորժամ այսորիկ և ստութեան նորա հոլանիւր կեզծիք պարզաբար զառ մեզ թշնամութիւնն. և զժողովցն քաղկեդոնի յայտնէր զհամաձայնութիւն, զի և զիրն զոր խոստանայր առնել զնոյն վկայէր մինչ զի ապա ցասուցեալ մեր ի վերայ այնպէս բազմաթիւր և բազմանդանակ բարցիցն ասացաք առ նա թէ զայդ զոր զրեցերդ և բերեր առ մեզ զըստ սահմանին քաղկեդոնի բանս կարծեցեր թէ մինչև ցայժմ զգոյն ոչ եաք լուեալ և ոչ զիտացեալ. այսօր ի քէն պէտք եղեն ուսանելոյ սկիզբն առնել. կամ այնքան աւուրս առ միմեանս մեր միաբանելոյն խորհուրդ զայդ երկեցցց պառւղ: առ որ պատասխանեալ ասաց. տիեզերաց աչք յիս հային և ինձ ամօթ մեծ է ի միաբանելոցն քակիլ և ընդ անմիաբանիցն լինել. և գարձեալ զի գուք և զմի ոչ ինչ յիմոց անտի կատարեցէք ինդրոցն, զի յառաջ քան զայս

առեր ձեռնագրութիւնս տալ ուխտի մանկանց, և ի քսան և ի հինգ գեկտեմբերի ծննունդ առնել. և զերեքսըրեան օրհնութիւնն ի վերայ երրորդութեանն և ոչ ի վերայ որդւոյ միայն նուագել ի բաց հանելով անգուստ զիսաշեցարն և որ ինչ այնպիսիք: առ որ ասացաք զանց առնելով զայլովքըն ամենեքումք իրեւ յոյժ նուաստագունիք, որովք ոչ այնքան յընդունելն օգտեսցի եկեղեցի, և ոչ յոչ ընդունելն վնասեսցի……

Խոսրովիկի այս երկասիրութիւնը ԺԳ. գ դարում Յովհան Երզնկացին գտնելով զետեղեց մի զբում Անանիա վարդապետի (Անահինեցի) և Սարկաւագ վարդապետի ընդդէմ երկարնակների գրութեանց հետ: Մեր ձեռագրում դանւումէ Անանիայի ամրող երկասիրութիւնը¹⁾ և Խոսրովիկի մի մասը, իսկ Խոսրովիկի երկասիրութեան միւս մասը և Սարկաւագինը²⁾ պակասումեն: Ծերթերը չը գրուած են մնացել: Աւելորդ չենք համարում առաջ բերել Երզնկացու այդ երեք զիրք բովանդակող մատեանի նախագրութիւնը:

«Ն ա իւ ա գ ր ու թ ի ւ ն գ ր ո ց ս ։»

«Նախ քան զմանել քո ի դրունս ընթացման³⁾ գրոց՝ պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական և բարելի գանձուց: Նուաստ և տկարողի Յօհաննէս Նղնկոյ և պիսկ ու կո ու պո ս սպասաւոր բանի և իմաստից գրոց սրբոց ծարաւի, յոլով ժամանակօք և աշխատութեամբ բազմաստացայ զայս երեք զիրքու, որ են հիմնենք հաւատոյ ուղղափառութեանն, Եւ թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք բարերախտութիւն մեծ և փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեանն զիտողի, Զոր և զտի ես յայլ և յայլ տեղի և ժամանակի, և ստացայ զերիս զիրսն, և ի նոցունց դարձեալ ետու զրել և առ միմեանս եզի և արարի մի զիրք: Առաջին՝ զԱնանիային, զհայոց վարդապետի, երկրորդ՝ զԽոսրովիկայ թարգմանչի և զհզոր զիտնականի, երրորդ՝ զՍարկաւագ վարդապետին և զմեծն իմաստասիրի զհաղբատեցոյ: Եւ թողում զսոսայեմ ժառանգէք յոգնազան բարեաց Ճոխութիւն: ամենառատ զանձուց փարթամութիւն, Աստուածարանական հանճարով յերկինս թռուցելոց՝ սա

1) Անանիայի վարդապետի հայոց՝ բան հակածութեան ընդդէմ՝ երկարնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի:

2) Եցր անշուշտ Սարկաւագի «Ընդդէմ երկարնակաց» երկասիրութիւնը պիտի լինի, որ դանւումէ մեր մատենագարանի մի ուրիշ ձեռագրում (Թիւ 519):

3) Թերեւո՞ւ ընթերց մաս:

թեք զօրաւոր և վերացուցիչ։ Յաշխարհիս ծովիս նաւելոց՝ զեկը վարիչք և ուղղիչք։ Ի մարտս խմբից հերձուածողականացն՝ զէնք սրեալք յաջողակ ձեռաց քաջամարտից։ Ի խաղաղական ժամու ժողովոց՝ սեղանք երկնաւորք և քաղցրաճաշակ լցեալ կերակրով։ Վաճառականաց՝ հանգոյն բարոյ և հմտագունից, մարդարիտ անգիւտ և աշխարհաւ ամենայնիւ գնեալ։ Աղքատաց անձանց և նիւթականաց անձեռնահասից՝ սա Ճոխութիւն երկնաւոր և անհամեմատելի։ Խմաստութեամբ լուսաւոր անձանց՝ արփի լուսաբուխ և բազմանշոյլ։ Անգիտութեան մթով պատելոց՝ ճրագ լուսատու և խաւարափարատ։ Սա ձեզ յոլով բարեաց բղխմունս աղբերաց և մեզ՝ նիւթ յիշատակի և բարբառ և ձայն առ ձեզ մաղթանաց։ Զի որք օգտիք և զուարճանայք՝ զողորմելի Յօհաննէս յիշեսջիք և մեզուցելոյս անձին և վարդապետին իմոյ և ծնողաց՝ ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսջիք։

Պէտք է յուսալ, որ ժամանակով կամ առանձինն և կամ Երզնկացուայս եռահատոր ժողովածուի մէջ գտնուի Խոսրովիկի այս պատմական—աստուածաբանական նորագիւտ գրուածքի ամրողջը։

ՄԻԱԲԱՆԿ.

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԽՈՍՐՈՎԻԿԱՅ ԹԱՐԳՄԱՆՁԻ Ի ՄԵՆԱՄԱՐՑԻՒՆ

ԴԱԼԻԹԻ ԵՒ ԳՈՂԻԱԴՈՒ:

Պատերազմական հանգիսիցն գումարք միշտ ահա երիւք այսքիւք զանազանութեամբք յաւետացեալ իւրաքանչիւրովքն ցուցանին զաւրութեամբք։ Ճիտմարտութեամբ և հետեւակամարտութեամբ և ի գլխովին նաւակուիւ տեսութեամբ։ Բայց մի ի նոցանէ առաւել ողորմելի ունելով գործառնութիւնն զի ի թաղմանն անգամ արժանաւորեալ զիւրտն արարտշէ անկեալու։ Եւ Ճիտմարտութիւն ոչ այնքան զնահատակութեանցն ունի փոյթ, որչափ թէ հեռագոյն վրիժակաւք նետաձգութեան կարծիս տալ անարութեան, զանձին և եթ ճողովրումն փութալ հնարէ։ Խոկ հետեւակամարտութիւնն առաւել քաջանայ բանիւ, զյաղթանակն ունի գովութեանն, վասն զի ի գէմն իրերաց գոլով մարտացող գործեւքն և աներկիւղ գրկախառնու(թեամբ) զախո-

յանիցն մերկացուցանելով յարդարէ գործ կամ հերքող լինելով, զաշխարհի գովութեանցն տանելով մրցանակ և կամ մեռանելով ի վերայ հայրենի գաւառին զպարծանացն բառնայ արդարութիւնն): Արում յիրաւի՝ ապա նմանապէս և ես փորձեցայց անցանել բանիւ՝ և համարելով զգոյն ի ճահ դժաւթայ և զԴողիագու միայնակուռութիւնն բերեալ այժմ առաջի ձերոյդեղից լսելեաց՝ սցովէս.

Քանզի տեսաւզ եղեալ իմ ողջամիտ համամբ ամենագեղեցիկ կենդանագրութեանն, ի պատշաճագոյն ուրեմն տեղւո՞ տեսանէի նախ առաջին զպարունակեալ արուեստագործութիւն, զի բաժանեալ ունէր զնիստ հաստատութեանն յերկաքանչիւրս ոմանս հատածս լերանց, բարձրագոյնս յարուցելոց յերկրէ, և այն էր իբրու ոչինչ կարի անձուկ յիրերեաց ունելով միջոց, այլ բաւական հովիտ առ ի զներհակացն բառնալ տանել հոյլս: Ար ի միում կողմանն ունելով վերագիր, ցուցանելով զիսրայէլեանն հարեալ բանակ, նոյն և յերկրորդումն զայլազգեացն՝ հակառակ նմին գումարեալ: Զօրոց զհետ ելանէր նահատակ մի ի նմին կողմանէ, ահաւո՞ ձեռի, յաղթ մարմնով, անձունի՝ հասակաւ, և պակուցանո՞ մեծութեամբ զինուցն. տի՞ նա և այլոյն ամենայնիւ զիւցազնական բոլորիցն թուէր տեսաւզացն: Եւ ոչ այնու միայն, այլ նաև գոզցես խրո՞ թխտ կարծեւքն և ձեռով մարմնոյն այնպէս ցուցանէր զինքն ամբարտաւանութեամբ լի՞ փքացեալ և իբր քամահա՞նս արարեալ երբայական ազգի, որպէս թէ նաև իցէ տուիչ յաղթութեանն և ոչ այլ ոք: Բայց այն էին պարծանք սուտ վերերեսութեան: Վասն զի այլ ոմն դարձեալ սմին հակառակ, նոյն աւրինակ նահատակ յարուցեալ յերջանիկ ի տեսական տոհմէն տեսանէի, զի համբառնայր հատուածեալ ի գնդէն, մանուկ տիաւք և յոյժ գեղեցիկ, և ի վերայ բարեձեռութեան դիմաց՝ ծաղկեալ շնորհաւք առաքինութեան, և զինեալ ընդդէմ այլազգւոյն գնայր, ախոյեան երեեցուցանելով զինքենէ, ի ճշգրտահան կենդանագրութեանն բերեալ ձեւ՝ ոչ ես զինուորութեան, այլ հովուական սովորութեան, յորում և անցեալ իմն նշկահէր, վստահ լինելով ոչ ի զէնս և յերիւարս

առաւել, քան թէ ճշմարիտ նշանակաւքն, հայեցուածովք մարմնոյն և տարածմամբք ձեռացն ի վերին յաւգնակամնութիւնն: Զայս ցուցանէր և յաստուածային նախախնամնղ զաւրութիւնն ապաստանեալ իսկոյն լոկ միայն զպարսատիկն աջոյ ձեռամբն առեալ և մախազ ընդ ունթ, նոյնովէս և ցուազ յահեկումն բերեալ ձեռին, երթայր գոզցես մինչ ի հեղեղատ ընչ և անդուստ ի վեր առեալ՝ ժողովէր ի մախազն՝ զքարանցն ընկենլով զպատեհագոյնս և զմի ի բազմացն ի ձեռն առեալ զողորկ իմնն¹⁾ և զբոլորակն ի խորտակումն հակառակամարտին գոլ գլխոյ, գնէր ի պարսատիկն և ինքն ընկճեալ խոնարհէր, յաջն յենլով ձեռն: Եւ այնովէս ձգէր՝ արձակեալ ի գէմս թշնամւոյն, մինչ զի հարեալ այնուհետեւ կշռակի ընդ աջամշջոն անցուցանէր, ջաղջախելով անցանել ընդ սաղաւարտն, և ընդ ճակատն ի ներքս յաւզիղն: Զոր և իսկոյն գիտացեալ լինէր՝ միոյն ի ճայթմանէ աղդեցութեան զզաւրութիւն յալիթութեանն, և երկրորդին՝ լքումն և վայրաբերումն պարանոցին: Եւ միանգամայն իսկ առձեռն պատրաստ նորին իսկ հակառակամարտին զինու հասանելով ի վերայ և արագապէս բառնալ զգլուխն համարձակ քաջարութեամբ: Եւ անդէն միւսանգամ յաղթով սպարծանաւք յիւրն հասուածեաց բանակ, յորմ՝ ի փախուստ այնուհետեւ գարձեալ լինէր այլազգեացն կողմ, ի սպարտութիւն մատնեալ ի հերլոյականացն, մինչև ցդրունս քաղաքացն երթային հալածեալք: Եւ իմ ահա զայս ամենայն տեսանելով՝ իրաւացի համարեցայ և ձեղ սպատմել:

¹⁾ Կուսանցքում՝ «զողորկիկն»: